



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

973

206.1
9-61

1870

2010

206.1

Printed in Turkey

10

9-61

Հ Ռ Ո Վ Մ Ի Պ Ա Պ Ի Ն

Պ Ա Հ Ա Ն Ջ Ո Ւ Մ Ն Ե Ր Ը

11462

Ըմենուն յայտնի է որ Հռովմի Պապն իրեն
 համար կ'ըսէ՝ թէ ինք տիեզերական եպիսկոպոս ,
 բոլոր եկեղեցիներուն զլուսը , և աշխարհի վրայ
 Վրիստոսի փոխանորդն է , և թէ բոլոր մարդիկ ,
 ինչպէս որ Վրիստոսի կը հնազանդին , այնպէս ալ
 իրեն հնազանդութիւն ընելու պարտաւոր են : Ը-
 սոնք շատ բարձր պահանջումներ են , ու մենք իրա-
 ւունք ունինք անոնց իրաւացի ըլլալուն շատ յայտնի
 վկայութիւններ փնտռել : Միայն մարդու մը իրեն
 համար վկայելը , այսինքն՝ Ես աշխարհի վրայ Վրիս-
 տոսի փոխանորդն եմ , ըսելը բաւական չէ մեզ հա-
 ճեցընելու : Մեր Փրկիչն ու Եռաբեալք մեզ
 սուտ քրիստոսներու , սուտ մարդարէներու և սուտ
 վարդապետներու դէմ զգուշացուցած են , և յայտնի
 կ'ըսեն թէ ամէն հոգիի չհաւատանք , հապա փոր-
 ձենք հոգիները ու նայինք թէ արդեօք Ես-
 տուծմէ՞ են :

Պապը մեզի կուզայ ու կը պահանջէ որ ընդու-
 նինք թէ ինք երկրի վրայ Վրիստոսի փոխանորդն է :
 Բայց եթէ ինք չի կրնար յայտնի ցուցնել թէ այս-
 պիսի պաշտօն մը իրեն տրուած է , ան ատեն պէտք
 է որ մերժենք զինքը՝ իբրև խաբեբայ և մոլորեցու-
 ցիչ , և անոր սպառնալիքներէն կամ բանադրանք-



2726
39

20 01

80

ներէն ամենեկին չվախնանք: Չեղ ամէնքդ դժոխք
կը ըզկեմ ըսելով կրնայ մեզի սպառնալիք ընել,
բայց տակաւին ինք ալ մեզի պէս տկար և անզօր է-
այն սպառնալիքներն ալ հովէն աւելի ծանրու-
թիւն չունին:

Ուրեմն հարցունենք թէ այն իրեն սեպհակա-
նած պահանջումներն ի՞նչ բանի վրայ հիմնուած
են: Ինք կ'ըսէ թէ, Պետրոս՝ Առաքելոց զլուխ
ու եկեղեցւոյ տիեզերական եպիսկոպոս կարգուած
էր, և թէ ինք Պապն ալ անոր յաջորդն է: Այս
խօսքին մէջ երկու բան կայ. մէյմը՝ որ Պետրոս
Առաքելոց զլուխ կարգուած էր, մէյմ'ալ որ Պա-
պերը Պետրոսի յաջորդներն են: Տայտնի է որ աս
երկու խնդիրներն իրարմէ բոլորովին զատ բաներ
են, մենք ալ զանոնք զատ զատ պիտի քննենք:
Ուրեմն՝ նախ պէտք է քննել, թէ արդեօք
Վրիստոս զՊետրոս առաքելոց զլուխ ըսա՞ւ:

Պապականաց բերած առաջին վկայութիւնը մեր
Տէրօջը Պետրոսի ըսած սա խօսքն է (Մատթ. 18):
«Եւ ես քեզի կ'ըսեմ որ Ղուռն Պետ-
րոս (Վէճ) ես, ու աս վէմին վրայ պիտի շինեմ
իմ եկեղեցիս, և դժոխքին դռներն անիկայ պիտի
չյաղթեն»:

Պետրոս քիչ մը առաջ ըսած էր թէ, «Ղուռն
ես Վրիստոս՝ կենդանի Աստուծոյ Որդին»: Է-
մա խնդիրը՝ սա է թէ մեր Պրկիչը Պետրոսի՞ն հա-
մար ուզեց ըսել թէ ան է այն վէմը՝ որուն վրայ
եկեղեցին կը կենայ:

Ասոր պատասխանը Պօղոս առաքիւյլ բացայայտ
կու տայ (Ա կորնթ. Գ. 11.) թէ «Մէկը ալ ու-
րիշ հիմ չկրնար դնել դրուածէն ՚ի զատ, որ է
Յիսուս Վրիստոս»: Ուստի ճշմարտապէս եկե-
ղեցին միայն մէկ հիմ ունի, ան ալ Վրիս-
տոս է: Ասիայն երկրորդական մտքով կրնան
ուրիշ հիմեր ալ ըլլալ. ինչպէս նոյն Պօղոս Եփե-
սացւոց կ'ըսէ (Բ. 20.) «Առաքեալներուն ու
Մարդարէներուն հիմին վրայ շինուած է, որ ա-
նոր անիւնին զլուխը Յիսուս Վրիստոսն է»:

Հոս հիմ ըսելով Պօղոս յայտնապէս Առաքեալ-
ներուն խրատներն ու վարդապետութիւններն իմա-
ցունել կ'ուզէ, ոչ թէ բուն իսկ Առաքեալները:
Եկեղեցւոյն հիմն անոնց դաւանած ճշմարտու-
թիւնն է, ոչ թէ անոնց պաշտօնին աստիճանը
կամ մեծութիւնը. նմանապէս Պետրոսի՝ «Ղուռն
ես Վրիստոս՝ կենդանի Աստուծոյ Որդին» ըսե-
լով դաւանած ճշմարտութիւնն էր զոր Վրիստոս
վէմ կոչեց, և որուն վրայ եկեղեցին պիտի շին-
ուէր, և ոչ թէ Պետրոս ինքը: Այսպէս կը մեկ-
նէ այս տունը նաև սուրբն (Օդոստինոս, զոր
Հռովմի եկեղեցին ալ կ'ընդունի: «Ղուռն ես Պետ-
րոս, ու այդ վիմին վրայ զոր դուն խոստովանեցար,
այդ վիմին վրայ զոր, Ղուռն ես Վրիստոս՝ կենդա-
նի Աստուծոյ Որդին, ըսելով ճանչցար, իմ եկե-
ղեցիս պիտի շինեմ. ես քեզ իմ վրաս պիտի կանգ-
նեցնեմ, ոչ թէ զիս քու վրադ»:

Ի՞նչ մեկնութիւն որ տանք այս տանը, թէ՛

սրբոյն Օգոստինոսի ըսածին հետեւինք որ եկեղեցւոյ յարգի հայրերուն մէկն է, և թէ՛ ուրիշ մեկնութիւն ուղենք տալ, պէտք է որ յայսմ միւսքանինք, թէ մեր Փրկիչն ըսել չուզեց որ իր եկեղեցին կը շինէ Պետրոսի պէս անզօր հիման մը վրայ. Պետրոսի որ իր տկար եւ յողօօղք մէկն ըլլալը քանի՛ քանի՛ անդամ ցուցուցած է. անդամ մը՝ տկար հաւատքով ծովին վրայ քալելու աշխատած ատենը. մէյմ՝ալ՝ երբ անիկա կը ջանար ըզ Վրիստոս համոզել որ մեղքի համար ինքզինք պատարագ չընէ, և Վրիստոս յանդիմանեց անիկա՝ ըսելով. « Ետի՛ս գնա Սա՛տանայ, ինձի դայթակղութիւն ես դուն. ինչու որ Եստուծոյ բաները չես մտածեր, հապա մարդոց բաները ». մէյմ՝ալ երբ իր Տէրը երգմամբ և անէծքով ուրացաւ : Անդամ մ՝ալ, Վրիստոսի մեռնելէն բաւական ատեն ետքը, այսինքն՝ այն միջոցին որ ըստ կարծեաց պապականաց արդէն իր աթոռին վրայ հաստատուած էր, հեթանոս հաւատացեալներուն հետ կեղծաւորութիւն ըրաւ. և Պօղոս՝ Պառ. Բ. 11 կ'ըսէ թէ, « Ես անոր դէմ կեցայ, որովհետեւ ինքը մեղադրուելու էր » :

Ար խոստովանինք թէ Պետրոս Յիսուս Վրիստոսի աշխատաւոր և ընտիր առաքեալն էր, և աշխարհի վրայ աւետարանը տարածելու գործիքներուն երևելիներէն մէկն էր : Անով կը աւետարանին առաջին քարոզութիւնը՝ Վրիստոսի մեռնելէն ետքը, առաջ չրէաներուն ու ետքը չե-

թանոսներուն. և ինք միշտ պատրաստ էր Վրիստոսի անուանը համար աշխատելու ու նեղութիւն կրելու : Բայց սակայն լոկ մարդ էր, և, ինչպէս պատմութիւնը կը վկայէ, սխալական մարդ. ուստի ոչ ոք կրնայ հաւատալ թէ անիկա եկեղեցւոյ ճշմարիտ հիմն է : Մեր գիտցած մի միայն հիմը Վրիստոս է. և թէ՛ ինչպէս որ արդէն յիշած էինք, « Մէկը ալ ուրիշ հիմ չկրնար դնել դրուածէն ՚ի զառ, որ է Յիսուս Վրիստոս » :

Եթէ կրնանք զՊետրոս եկեղեցւոյ հիմը կոչել, ուրեմն Յակոբոս ու Յովհաննէս (Պառ. Բ. 9.) նաև բոլոր մարդարէք հիմեր են (Եփէս. Բ. 20) : Ես այլաբանական մտքովանոնք հիմեր կրնան ըլլալ. այսինքն՝ անոնց ըսած կամ դրած խօսքերը որ Հոգւոյն Սրբոյ անսխալ առաջնորդութեամբն էին՝ մեր հաւատքին հիմը կրնան ըլլալ, ինչպէս որ են իսկ : Սակայն այս մասին Պետրոս միւս Առաքեալներուն վրայ գերադոյն իշխանութիւն մը չունի : Անոնք բոլորը մէկտեղ այս մտօք հիմեր կ'ըսուին, և Եստուծոյ խօսքին մէջ տուն մը չի դանուիր որ այս մասին Պետրոսի յատուկ իշխանութիւն մը տուած ըլլայ : Եթէ այսպիսի տուն մը կայ, թող յառաջ բերուի :

Պապականներուն երկրորդ բերած վկայութիւն Սառ. 19 համարն է, ուր Վրիստոս Պետրոսի կ'ըսէ. « Ու երկնից թագաւորութեան բանալիները քեզի պիտի տամ ». և ինչ որ երկրի վրայ կապես, երկինքին մէջ կապուած պիտի ըլլայ. ու

ինչ որ երկրի վրայ արձակես , երկինքին մէջ ար-
ձակուած պիտի ըլլայ » :

Բանալին իշխանութեան նշան է , և յայտնի է
որ բանալիներ , ու կապելու և արձրկելու իշխա-
նութիւն տալը , մի և նոյն բան է : Բայց այս իշ-
խանութիւնը բոլոր Առաքելոց տրուեցաւ , ինչպէս
որ Մատթ. ԺԸ . ԳԼ . 18 Համարէն կը տեսնենք ,
ուր Տէրը բոլոր աշակերտներուն մէկէն նոյնպէս
կ'ըսէ . « Երկրի վրայ ի՛նչ որ կապէք , երկինքի
մէջ կապուած պիտի ըլլայ . ու երկրի վրայ ի՛նչ որ
արձակէք , երկինքի մէջ արձակուած պիտի ըլլայ » :
Նաև Յովհ. Ի . 23 , Քրիստոս ըսաւ բոլոր իր ա-
շակերտներուն . « Որոնց որ մեղքերը թողուք ,
թողուած ըլլայ անոնց . և որոնց որ մեղքերը ետ
բռնէք , բռնուած ըլլայ » , որ կապելու ու արձր-
կելու պէս նոյն բանը կը նշանակէ : Հիմա մեր
Փրկիչն ինչ իշխանութիւն որ Պետրոսի տուաւ ,
յայտնի է որ ճիշտ նոյն իշխանութիւնը նոյն խօս-
քերով տասուերկու առաքելոց ալ տրուեցաւ . ուս-
տի անօգուտ է այս մէկ տունը վկայութիւն բերել
թէ Պետրոսի գերաշոյն իշխանութիւն մը տրուած
էր Առաքելոց մէջ :

Աս տեսրակը կարգացողը պիտի զարմանայ երբ
զիտնայ թէ պապադաւանք ուրիշ բան չունին
Աստուածաշունչէն վկայութիւն բերելու իրենց այս-
չափ խստիւ պնդած բանին համար , թէ Քրիս-
տոս Պետրոսը երկրի վրայ իրեն փոխանորդ և բո-
լոր Առաքելոց գլուխ կարգած է : Բայց այսպէս

է . անոնք ուրիշ վկայութիւն չունին , և այն իրենց
ունեցած վկայութիւնն ալ այսպիսի բան մը հաս-
տատելու , ո՛րչափ տկար և անբաւական է :

Հիմա եթէ Վոր Ատակարանին քանի մը դէպ-
քերուն նայինք , յայտնի կը տեսնենք թէ Պետ-
րոս Առաքելոց գլուխ չէր կրնար ըլլալ :

Երբ Առաքելները Քրիստոսի եկան (Մատթ.
ԺԸ . 1) և հարցուցին թէ՛ « Ո՛վ է մեծ երկնից
թաշաւորութեանը մէջ » , եթէ մեր Փրկիչն ա-
ռաջ զՊետրոս երկրի վրայ իրեն տեղ փոխանորդ
դրած ըլլար , ինչպէս որ Պապականք կը պնդեն ,
ինչո՞ւ համար չըսաւ անոնց թէ՛ « Իմ միտքս չհաս-
կըցա՞ք որ Պետրոսի՛ » Աս վէմին վրայ իմ եկեղե-
ցիս պիտի շինեմ » ըսելով անիկա ձեզն գլուխ կար-
գեցի , ու աշխարհի վրայ իմ թագաւորութեանս
մէջ առաջին » : Եւ երբ Յակոբոս ու Յովհան-
նէս և անոնց մայրը Յիսուսի գալով (Մատթ. Ի .
20, 21. Մար. Ժ . 35, 37 .) անոր թագաւորու-
թեանը մէջ ամենէն բարձր տեղը կամ պաշտօնը
խնդրեցին , որ ճիշդ այն պաշտօնին նման էր՝ զոր
Պապականք կը պնդեն թէ Պետրոս ունէր , ինչո՞ւ
համար Քրիստոս չըսաւ անոնց թէ « Այդ ան-
հնարին է . ես այն տեղը կամ պաշտօնն արդէն
ուրիշի մը տուած եմ , այն է՛ Պետրոսի » :

Փոխանակ այս տեսակ պատասխաններ ընելու ,
զոր անշուշտ պիտի ընէր , եթէ Պապականներուն
կարծիքը ճշմարիտ եղած ըլլար , այս երկու խըն-
դիրներուն մէջ ալ անոր պատասխանն ըստ ամե-

նայնի հակառակն եղաւ, Պապականաց կարծիքին, ու այս մասին անոնց ունեցած գաղափարներնուն բոլորովն ներհակ: Վրիստոս կը ջանայ անոնց ցուցնել թէ իրենց մէջ ամենեւին առաջին և յետին պիտի չըլայ, հապա կատարեալ հաւատարու թիւն մը: Անոնց մէջ տղայ մը դնելով (Մատթ. ԺԸ. 2, 4) ըսաւ. «Ո՛վ որ իր անձը աս տղուն պէս խոնարհեցընէ, անիկայ է մեծ երկնից թազաւորութեանը մէջ»: Աստուծոյ արքայութեան մէջը մեծութիւն ստանալու համար Հռովմի Պապին բռնած ճամբէն շատ տարբեր է Վրիստոսի ցուցուցած այս ճամբան. Յակոբոսի ու Յովհաննու անվայել խնդրոյն մէջ, մեր Փրկչին իր աշակերտացը ուղղած խօսքը ևս աւելի հակառակ է Պապականաց Պետրոսի մեծութեանը վրայ ունեցած կարծեացը: Վրիստոս ըսաւ. «Պիտէք որ ազգաց իշխան սեպուածները կը տիրեն անոնց, և մեծամեծները կ'իշխեն անոնց. բայց ձեր մէջը անանկ պիտի չըլայ. հապա ձեզմէ ո՛վ որ մեծ ըլլալ կ'ուզէ, անիկայ ձեր սպասաւորը ըլլայ. ու ձեզմէ ո՛վ որ առաջին ըլլալ կ'ուզէ, անիկայ ամենուն ծառայ ըլլայ» (Մատթ. Ժ. 42—44.) Մեր Փրկչին Հռովմի Պապին իրեն սեպականած անբարձր իշխանութիւնը առաջուց տեսած ըլլալով, թերևս դիտմամբ այս խօսքն ըսաւ որ այն խնդիրը բոլորովն հանդարտեցընէ, ու ցուցընէ թէ ինչպէս ամէն բանի մէջ Հռովմի եկեղեցւոյն հոգին ու վարքն աւետարանին պատուիրանացը և հոգւոյն

հակառակ են: Հեթանոսներուն մէջ իշխաններ ու մեծամեծ մարդիկ կային՝ որոնք իշխելու զօրութիւն ունէին. և եթէ Պետրոս Առաքելոց իշխանը կամ դուխը եղած ըլլար, բոլոր մարդոց խիղճերուն, մարմիններուն ու հոգիներուն վրայ իշխանութիւն պիտի ունենար, իշխանութիւն մը զոր Հռովմի եկեղեցին իրեն կը սեպահանէ, և մեր Փրկչին ամենեւին պիտի չկրնար ըսել՝ «Բայց ձեր մէջը անանկ պիտի չըլայ»: Աշխարհիս վրայ, թէ Հեթանոս ազգաց և թէ Հրէից մէջ, ամենեւին եղած չէ այնպէս կատարեալ տիրապետական իշխանութիւն մը, ինչպէս է Հռովմի եկեղեցւոյնը՝ զոր կը պարծի ունենալ հաւատացելոց մարմիններուն ու հոգիներուն վրայ: Արդեօք ասկէ աւելի բան մը ըսելու կարոտութիւն կայ աս պահանջման բոտ ամենայնի Վրիստոսի խօսքին հակառակն ըլլալը ցուցնելու համար Վրիստոս այն խօսքով ցուցուցած է թէ ինչպէս վայել է ըլլալ իր աշակերտներուն մէջ: Անոնց մէջ մեծ ու պզտիկ չկար, բոլորն ալ իրարու հաւասար էին. Պետրոս ալ հարկաւ անոնց դուխը չէր:

Սակայն ասիկա աւելի յայտնի է բուն Առաքելոց վարքէն՝ Վրիստոսի մեռնելէն ու յարութիւն առնելէն ետքը:

Պետրոս ամենեւին այնպիսի մեծութիւն մը չպահանջեց, ինչպէս որ Պապը հիմա այնչափ բարձրաձայն կը պահանջէ: Բուն իր նամակներուն մէջ ինքզինք լոկ Յիսուսի Վրիստոսի «առաքեալը

ու ծառան» կը կոչէ. տեղ մ'ալ կ'ըսէ (Ա Պէր . Ե . 1 ,) « Չեր մէջը եղող երէցներուն կ'աղաչմ' ես ալ անոնց պէս երէց ըլլալովս » : Որչափ տարբեր է աս գրութեան եղանակն այն Պապերուն զուրս զըկած կոնդակներուն եղանակէն , որոնց մէջ զերենք Վրիստոսի փոխանորդը կը կոչեն , և ուրիշ ասոր նման անուններ կ'առնեն : Ղշմարիտ է որ երբեմն շատ խոնարհական անուններ կը գործածեն մասնաւոր զիտաւորութիւններու համար ինչպէս՝ Ծառայ ծառայից Եստուծոյ , և այլն . բայց եթէ ուրիշներ այս անուններով կոչեն զանոնք , սաստիկ պատուհաս կը կրեն իրրե թէ մեծ յանցանք մը գործած են :

Երբ , եթէ մեր փրկիչը զՊետրոս երկրի վրայ իրեն տեղ փոխանորդ ու Եռաբելոց մէջ մեծ կարգած ըլլար , անշուշտ Պետրոս իր թուղթերուն մէջ տեղ մը պիտի գրէր , որ առաւել յարգ ու պատիւ ստանար : Սակայն թէ՛ անոր թուղթերը և թէ Գործոց Եռաբելոց մէջ յիշուած անոր խօսքերը չեն պարունակիր բառ մը անգամ , որմէ կարելի ըլլայ ցուցուիլ թէ Պետրոս Պապականաց անոր ընծայած իշխանութեան պէս իշխանութիւն մը ունենալ կը կարծէր : Եթէ ըսուի թէ Եռաբելոց կը լռէ այս նկատմամբ՝ համեստութեան համար , կամ իր քրիստոնէական խոնարհութենէն , ասոր կը պատասխանենք թէ գէթ միւս Եռաբելոց խօսքերուն մէջ անոր մեծութեանը վրայով բան մը ըսուած ըլլալու էր . բայց ամենևին աս տեսակ բան

մը անոնց գրուածներուն մէջ չի գտնուիր : Ընոնք զՊետրոս ո՛չ Վրիստոսի փոխանորդ և կամ եկեղեցւոյ զլուս կամ ընդհանուր եպիսկոպոս կը կոչեն , ոչ ալ երբէք անոր այսպիսի աստիճանի մը արժանաւոր յարգութիւնը կ'ընծայեն : Երբ մեր փրկիչն անոնց հետ էր , կը զանոնք որ անոնք միշտ անոր Տէր և Արդապետ անունը կու տային , և բոլոր հաւատոյ ու զաղտնի խորհուրդներու վերաբերեալ տարակուսելի խնդիրներու վրայ անոր խորհուրդը կը հարցնէին . սակայն Պետրոսի մեծութիւնը ցուցնելու համար անոր երբէք այնպիսի անուն մը չեն տար , Վրիստոնէական վարդապետութեան կամ պարտականութեան վերաբերեալ բաներու վրայ ալ անոր խորհուրդ չեն հարցններ . արդարեւ աս բաներն ըրած պիտի ըլլային , եթէ Վրիստոս անոնց քովէն երթալէն ետքը ըզ Պետրոս անոնց զլուս և երկրի վրայ իրեն օրինաւոր փոխանորդ զրած ըլլար : Ընդ հակառակն՝ անոնք միշտ անիկա իրենց հաւատար կը բռնէին . ինչպէս որ իրօք այնպէս էր : Պօղոս կ'ըսէ թէ ինք իր քաղաքութեան պաշտօնը մարդէ չառաւ , հապա Յիսուս Վրիստոսի յայտնութենէն : Կ'ըսէ նաև թէ , երբ Յիսուս Վրիստոսէ կանչուեցաւ Եւետարանը քարոզելու (Պաղ . Ա . 17 ,) , Երուսաղէմ չելաւ իրմէ առաջ եղող Եռաբելոններուն քով՝ անոնցմէ իր պաշտօնն առնելու : Եւ երեք տարի քարոզելէն ետքը միայն Երուսաղէմ երթալով Պետրոսն ու Յակոբոսը զտաւ ու տասնէհինգ

որ անոնց քով կեցաւ (Պատմ. Ա. 18, 19) :

Ըրդ եթէ Պետրոս եկեղեցւոյ ղլուխն ու Քրիստոսի փոխանորդը եղած ըլլար, անշուշտ Պօղոսի պարտականութիւնը եղած պիտի ըլլար շիտակ անոր երթալ, և անկէ իր պաշտօնն ու խրատներ ընդունիլ: Բայց անիկա այսպէս չբաւ. Պօղոս այն ժամանակ իրեն ու Պետրոսի և Յակոբոսի մէջ տեղ եղած խօսակցութիւնը Քաղաքացւոց թուղթին Բ. գլխոյն 6 համարին մէջ կը յիշէ. « այս յառաակութենէն կը տեսնուի որ Պօղոս անոնց հետ խօսելով աւելի օգուտ մը կամ իշխանութիւն մը չընդունեց: Նաև Պատմ. Բ. 11 կ'ըսէ թէ ինք Պետրոսի դէմ կեցաւ, քանզի անոր կեղծաւորութիւնը մեղադրանաց արժանի էր: Ընտարակոյս աս խօսքէն չերևար թէ Պօղոս զՊետրոս իբր ընդհանուր եպիսկոպոս, Քրիստոսի փոխանորդ, և հաւատոյ վերաբերեալ բաներու մէջ իբրև անսխալ դատաւոր ու պատգամախօս կը համարէր:

Նոյն Առաքեալը Կորնթացւոց թուղթին մէջ ալ Բ. Կորնթ. Ժ. Ա. 5) իրեն համար կ'ըսէ. « Քանզի ես առանկ կը սեպեմ՝ որ ամենէն երևելի Առաքեալներէն բանով մըն ալ պակաս չեմ »: Պօղոսի այս խօսքը շատ անիրաւ ու ամբարտաւանական կը համարուէր, եթէ Պետրոս Քրիստոսի փոխանորդն ըլլար: Եթէ Հռովմի կարգինալնեւուն, կամ ուրիշ եպիսկոպոսաց մէկը Պապին ըսէր թէ՛ « Ես այնպէս կը համարիմ որ ամենէն բանով մը պակաս չեմ եկեղեցւոյ մէջ ամենէն մե-

ծէն », ո՞չ ապաքէն ապստամբ կը համարուի, և կը պատժուի:

Յայտնի է թէ Պօղոս՝ Պետրոսի գերագոյն իշխանութիւն ունենալը չնստտովանեցաւ. բայց թեւեւ հարցուի թէ միւս Առաքեալներն ու ընդհանուր եկեղեցին չնստտովանեցա՞ն: Քործոց Առաքելոց վեցերորդ գլխուն մէջ կը կարդանք թէ՛ եկեղեցին մէկտեղ ժողովուեցաւ սարկաւազներ կարգելու: Եթէ Պետրոս ընդհանուր եպիսկոպոս ըլլար, ինք իր յատուկ իշխանութեամբը հոն ներկայ պիտի գտնուէր: Բայց եկեղեցին Պետրոսը չկանչեց, այն սարկաւազներն ալ ան չձեռնադրեց: Քործոց Զ. 2. կ'ըսուի թէ տասուերկու Առաքեալք աշակերտներէն շատերը մէկտեղ կանչեցին, ու անոնց յանձնեցին, իրենց՝ այսինքն տասներկուքներուն համար, ընտրել յարմար մարդիկ որոնք աս գործին վրայ կեցընեն: Ըրդ մենք լսած ըլլալով Քրիստոսի կանխաւ Առաքելոց ըսածը թէ անոնք իրենց պաշտօնին մէջ կատարեալ հաւասար պիտի ըլլան իրարու հետ, անշուշտ Առաքեալներէն ասկէ տարբեր բան մը չենք կրնար սպասել (Տե՛ս Կորնթ. Ի. 25—27):

Քործոց տասներկուքերորդ գլխուն մէջ պատմութիւն մը ունինք այն ժողովին վրայ՝ որ հաւատոյ ու սովորութեան խնդիր մը հաստատելու համար Քրիստոսնէից առաջին ժողովն էր: Նոր կտակարանին մէջ չկայ խօսք մը որմէ ցուցուի թէ այն ժողովքին մէջ Առաքեալք զՊետրոս իբր ան-

սխալ պատշամախօս համարելով, անոր խորհուրդ հարցուցին. այլ կը կարդանք որ Առաքեալները, երէցներն ու եղբայրները մէկտեղ եկան խնդիրը քննելու: Կ'երևի թէ այս նկատմամբ Պետրոս ամենեկին մեծութիւն մը չունէր: Ո՛չ ինք այն ժողովքը կանչեց, ո՛չ այն խնդրին վրայ զատ վճիռ մը տուաւ, ո՛չ ալ ուրիշները կարծեցին թէ աս տեսակ բանին մէջ անիկա յատուկ իշխանութիւն մը ունէր: Պետրոս ալ միւսներուն պէս իր կարծիքն ըսաւ, և ՚ի վերջոյ Յակոբոս իր վճիռը տուաւ, որուն բուրն ալ միաբանեցան. ու Առաքեալը, երիցունք և բոլոր եկեղեցին ընտրուած մարդիկ Մատիոք զրկեցին այն վճիռը հօն տանելու (Պարթ. ԺԵ. 22):

Պետրոսի՝ Առաքելոց զրուխ և Վրիստոսի փոխանորդ ըլլալուն կարծիքը, կ'երևի թէ այս ժողովին մէջ նստողներէն մէկուն անդամ մտքէն անցած չէր: Երգարև եթէ անիկա Պապին ժողովքն ըլլար, և ինք Պապը հօն ըլլար, շատ տարբեր կերպով պիտի տեսնուէր զործը:

Գարձեալ՝ Պործոց ութերորդ զլխէն կը սորվենք, թէ երբ Փիլիպպոս Սամարացոց քաղաքը երթալով Վրիստոս քարոզեց անոնց, շատերը հաւատացին, ու բոլոր անտեղի եղած հրաշքներուն լուրերը Երուսաղէմ տարուեցան: « Իսկ Երուսաղէմի մէջ եղող Առաքեալները երբոր լսեցին թէ Սամարացիք Աստուծոյ խօսքը ընդունել են, Պետրոսը ու Յովհաննէսը անոնց զրկեցին » (Պարթ. Ը. 14): Հոս՝ Առաքեալներն իրենց իշխա-

նութեամբը զՊետրոս զործի վրայ դրին, և իրենք զրկեցին անիկա պաշտօնի մը. բայց պապականները կ'ըսեն թէ անիկա անոնց զրուխն էր: Պապի՛կը կը զրկէ մեծը, եթէ մեծն զպապի՛կը: Աս հարցման վճիռը մեր Փրկիչը կտրեց ըսելով. « Խորհուածը զինքը խրկողէն մեծ չէ » (Յ. 16. ԺԳ. 16): Եւ Պետրոս ոչ միայն միւս Առաքեալներէն զործի զրկուեցաւ, հապա Յովհաննէսի ալ ընկերացաւ՝ իբրև իրեն հաւասար մէկու մը: Առաքեալները միայնակ չզրկեցին զՊետրոս՝ հապա Պետրոսն ու Յովհաննէսը մէկտեղ զրկեցին, հաւասար զօրութեամբ և հաւասար իշխանութեամբ: Եւ ասկէ ետքը ո՛վ կրնայ հաւատալ թէ Առաքեալը՝ զՊետրոս իբրև իրենց զրուխ, կամ թէ երկրի վրայ իրենցմէ աւելի և Վրիստոսի փոխանորդը կը համարէին: Եւ եթէ ո՛չ Պետրոս ասանկ կարծիք մը ունէր իրեն համար, ո՛չ ալ միւս Առաքեալներն անոր այսպիսի զօրութիւն մը ունենալը կը խօստովանէին, յայտնի է որ՝ անոր ստուգիւ այսպիսի զօրութիւն մը տրուած չէր:

9796
36

Մինչև հիմա մեր ըրած առաջարկութիւնները համառօտաբար երկրորդենք, որպէս զի անոնց կատարեալ զօրութիւնը կարող ըլլանք տեսնել:

Նախ տեսանք թէ Պետրոս ինչ կերպով որ վէմ կամ հիմ եղաւ՝ որուն վրայ եկեղեցին շինուած է, բոլոր միւս Առաքեալներն ալ նոյն կերպով հիմեր էին:

Երկրորդ՝ տեսանք որ բանալիները կամ կապե-

լու և արձակելու զօրութիւնը , հաւասարապէս բոլոր Առաքելոց տրուեցաւ :

Երբորդ՝ թէ Քրիստոս յատկապէս աշխատեցաւ իր աշակերտներուն մտացը մէջէն բոլոր փառասէր խորհուրդները խել մէկդի հանել , ու շատ յայտնի կերպով անոնց սորվեցուց որ՝ իրենց մէջ ամենեկին մէկը միւսներէն մեծ պիտի չըլլայ :

Չորորդ՝ Պետրոս ամենեկին իր եղբայրներուն վրայ իշխանութիւն մը ունենալ չուզեց , ու նշան մ'ալ չտուաւ , ո՛չ բերնով , և ո՛չ իր նամակներուն մէջ թէ ինք այնպիսի իշխանութիւն մը ունի :

Հինգերորդ՝ անոր եղբայրները , միւս Առաքեալք , անոր բարձր անուններ տալով , և կամ վճիռ տալու համար անոր հարկաւոր հարցումներ ընելով չխոստովանեցան թէ անոր քով աւելի և յատուկ իշխանութիւն մը կայ :

Վեցերորդ՝ Պետրոս եկեղեցական գործոց մէջ մեծութիւն մը չառաւ . ինչպէս , այն առաջին սարկաւազներու ընտրութեան ու ձեռնադրութեան ժամանակը , կամ այն առաջին ժողովին մէջ ուր Յակոբոսի խորհուրդը Պետրոսինէն աւելի ընդունուեցաւ :

Եօթներորդ՝ Պողոս զինք երջանիկ կը համարէր որ՝ միւս Առաքեալներուն մէկէն չձեռնադրուեցաւ . կ'ըսէր նաև թէ անոնց ամէն մէկէն բանով մը պակաս չէր :

Ութերորդ՝ Պետրոս փոխանակ ուրիշները կարգադրելու և ձեռնադրելու , ինքը եղբայրներէն Սամարիա զրկուեցաւ :

Ի՞նչըր պի առաջարկութիւններէն արևի պէս յայտնի է թէ Պետրոս ամենեկին Առաքելոց զլուսկարգեալ չէր :

Ի՞նչըր գիցուք թէ Քրիստոս իր աշակերտներուն մէջ զանազանութիւն մը ըրաւ , ու Պետրոսի գերագոյն իշխանութիւն մը տուաւ իբրև իր փոխանորդին . սակայն տակաւին չի կրնար հաստատուիլ թէ Պապը Պետրոսի օրինաւոր յաջորդն է :

Նախ՝ Քրիստոս ծանօթութիւն մը չտուաւ որ Պետրոս , կամ թէ Առաքեալներուն մէկը , Աստուծոյ կողմանէ ներշնչեալ յաջորդներ պիտի ունենար : Ինք Առաքեալներուն մասնաւոր իշխանութիւններ տուաւ՝ ո՛չ միայն աւետարանը քարոզելու , հապա հիւանդներ բժշկելու , կապելու և արձրկելու , և : Սակայն տեղ մը չըաւ թէ անոնք իրենց պէս Աստուծոյ կողմանէ ներշնչեալ յաջորդներ պիտի ունենային , որոնց այս պարգևները պիտի տրուէր : Եթէ մարդ մը պնդելու ըլլայ թէ Պետրոս , կամ միւս Առաքեալներն այսպիսի յաջորդներ պիտի ունենային , այնպիսոյն կ'աղաչենք որ Աստուծոյ խօսքէն ցուցընէ այն ըսածը . թէպէտ աղէկ գիտենք որ չի կրնար , ինչու որ ասոր վրայ Աստուծոյ խօսքն ամենեկին բան մը չի խօսիր :

Երկրորդ՝ եթէ Պետրոսի յաջորդներ ունենալը կրնար ցուցուիլ , տակաւին սա կը մնար ցուցուելու թէ՛ արդեօք Հռովմի Պապերն անոր յաջորդ-

նե՞րն են : Ինչո՞ւ համար Հռովմի եպիսկոպոսն այս պատուոյն , այսինքն՝ Պետրոսի յաջորդն ըլլալու , յատուկ իրաւունք մը պիտի ունենայ , Երուսաղէմի , Մնտիոքի և Եփեսոսի եպիսկոպոսներէն աւելի : Պետրոսի Հռովմ գացած ըլլալն անշամ Եստուածաշունչէն չի կրնար հաստատուիլ . Եւսեբիոս , Որոզինէս և ուրիշ մատենագիրներէն ոմանք կ'ըսեն թէ անիկա Հռովմ էր , սակայն այս հեղինակները Պետրոսէն քանի մը հարիւր տարի ետքն էին , և անոնց պատմածներն աւանդութեան վրայ միայն հիմնուած են . դարձեալ ո՛չ իրարու , ո՛չ ալ Նոր Կտակարանին պատմութեանը համաձայն են :

Եւսեբիոս կ'ըսէ թէ Պետրոս Կղզիոսի թագաւորութեան ատենը Հռովմի մէջ էր . Հերոնիմոս ալ կ'ըսէ թէ քսանեւհինգ տարի հոն նստաւ , մինչև Ներոնի թագաւորութեան վերջը . և որովհետև Ներոն որ Կղզիոսի յաջորդն էր՝ տանեւորս տարի թաշաւորեց , Պետրոս Կղզիոսի թագաւորութեանը երկրորդ կամ երրորդ տարին հոն գացած պիտի ըլլայ : Իսկ Դամասոս կ'ըսէ թէ Ներոնի թագաւորութեան սկիզբը Պետրոս Հռովմ եկաւ , և քսանեւհինգ տարի նստաւ , և թէ Միմոն մոզին հետ իր ըրած վեճաբանութիւնը՝ Ներոնի առջևն եղաւ . բայց ընդհակառակն Եւսեբիոս կ'ըսէ թէ այն դէպքը Ներոնէն առաջ թաշաւորող Կղզիոսի օրովը տեղի ունեցած է : Եյսպէս կը տեսնենք որ այս վկայութիւններն իրարու համաձայն

չեն . պատմողներն իրենց ըսածն ՚ի լոյ միայն , ոչ թէ Նոր Կտակարանէն կամ ուրիշ գիրքէ մը առնելով զրած են : Դեռ անոնք չգրած՝ աս պատմութիւնները երկու կամ երեք հարիւր տարի բերնէ բերան անցած էին . և արդէն ամենուն յայտնի է թէ ո՛րչափ անստոյգ են բերնէ բերան անցած անգիր պատմութիւնները : Բայց և այնպէս այսպիսի պատմութիւններու վրայ հաստատուած է այն կարծիքը թէ Պետրոս Հռովմի եպիսկոպոսն էր , Հռովմի Պապն ալ այսպիսի իրարու հակառակ վկայութիւններով կը հաստատէ թէ ինք Պետրոսի յաջորդը և եկեղեցւոյ զլուխն է : Եպա ոչ Եստուծոյ ճշմարիտ և անսխալ խօսքէն , ո՛չ ալ ան ատենի կամ ան ատենին մօտ եղող մարդոց վկայութենէն կրնայ ցուցուիլ անոր պահանջած աստիճանը , այլ հիմնուած է անստոյգ խօսքերու վրայ որ երկու հարիւր տարիէ աւելի ետքը , իրրև պատմական դէպք մը սկսաւ պատմուիլ : Հիմա բանն ալսպէս մնացած է . Պապը կ'ըսէ թէ Պետրոսի յաջորդն եմ . մենք անկէ վկայութիւն կ'ուզենք : Կը խնդրենք որ մեզի ցուցնէ թէ ե՛րբ կամ ուր ինք այնպիսի աստիճան մը առաւ : Եմենեին կարող չէ աս բանին վրայ Սուրբ Իերփերէն կտոր մը վկայութիւն բերել : Տուն մը բան չի կրնար ցուցնել մեզի , որ իր ըրած այս պահանջմանը պզտիկ վկայութիւն մը ըլլայ : Ուրիշ բան չըսեր մեզի բայց սա չնչին խօսքը թէ Պետրոս անգամ մը Հռովմ գնաց , և ասիկա հաս

տատելու համար յառաջ կը բերէ անորոշ ու հա-
կասական խօսքերով աւանդութիւն մը զոր իբրև
եղած չլատմեց պատմադիր մը կամ հեղինակ մը
աւելի քան երկու հարիւր տարուան միջոցին : Եւ
իր այս չնչին խօսքովը կը պահանջէ մենէ որ՝ ամե-
նայն խոնարհութեամբ հնադանդինք հիմակուան
Հռովմի Պապին , իբրև եկեղեցւոյ գլխուն . և երկ-
րի վրայ Քրիստոսի փոխանորդին : Չենք գիտեր
թէ ուրիշներն ինչ կը խորհին , բայց մեր միտքն
այսպիսի փայտերով ամենեկին չի համոզուիր . և
խղճի մտքը ասոնց պէս թեթև վկայութիւններով
այս կերպ բարձր պահանջումի մը հաճութիւն չենք
կրնար տալ : Աւտի և Պապը թողութիւն ընելու
է եթէ իր գերագոյն իշխանութիւնը չենք կրնար
ընդունիլ մինչև որ աւելի հաստատուն ապացոյց-
ներ չլուցնէ մեզի :

Նաև Պետրոսի 25 տարի Հռովմ ըլլալուն դա-
ղաիարը համաձայն չէ Սուրբ Գրոց : Եթէ Պե-
տրոս այսչափ ժամանակ հոն եպիսկոպոս եղած ըլ-
լար , Պօղոսի հոն բանտը եղած ատենը՝ կամ զօ-
նէ Հռովմայեցւոց թուղթը գրած ատենը , հոն
եղած պիտի ըլլար : Սակայն Պօղոս՝ ո՛չ Հռովմի
մէջ եղող հաւատացեալներուն գրած նամակին
մէջ , ո՛չ ալ այն տեղէն գրած նամակներուն մէջ ,
ո՛ր և իցէ հարեանցի նշանակութիւն մը կ'ընէ
Պետրոսի հոն ըլլալուն վրայ : Կրնա՞նք հաւատալ
թէ այսպէս պիտի ըլլար , եթէ Պետրոս իրաւ հոն
եղած ըլլար . մանաւանդ՝ եթէ անիկա Հռովմի

եպիսկոպոսը , աշխարհի վրայ Քրիստոսի փոխա-
նորդը և բոլոր եկեղեցւոյ զուխ եղած ըլլար :
Պօղոս իր քրիստոնէական ողջոյնները գրեթէ եր-
սուն այլևայլ մարդոց զըկած է . և կրնա՞ր մոռնալ
բոլոր իր նամակներուն մէջ խօսք մ'ալ Պետրոսի
վրայ ըսելու :

Պօղոս երբ Հռովմի մէջ բանտարդեալ էր՝ և
իր նամակներուն շատերն անկէ գրած է , կրնա՞ր
ըլլալ որ իր քով եղողներէն ուրիշներու ողջոյն-
ներ զըկէր , ու Պետրոսէն երբեք ողջոյն մը մէկու
չըրկէր , եթէ Պետրոս հոն եղած ըլլար : Անիկա
անհաւատալի բան է , և ամէն լուսաւորեալ միտք
միօրինակ վճիռ կու տայ թէ Պետրոս Հռովմ
չէր՝ ո՛չ Պօղոսի հոն եղած ժամանակը , ո՛չ ալ
Հռովմայեցւոց թուղթը գրած ատենը : Սակայն
Պօղոս Հռովմ էր Նիքոնի թաղաւորութեան ժա-
մանակը , և պապականներուն իբր հաւատարիմ
ընդունած պատմիչներուն նայելով , Պետրոս ալ
հոն էր մինչև Նիքոնի թաղաւորութեանը վերջը .
արդ՝ եթէ այս վկայութիւնը ճշմարիտ է , միևնոյն
ժամանակ երկուքն ալ Հռովմ եղած պիտի ըլլա-
յին , որ ինչպէս տեսանք , անհաւատալի է :

Բայց թէև ամէն մարդ համոզելու չափ հաս-
տատուի թէ Պետրոս անգամ մը Հռովմ գտնուե-
ցաւ , տակաւին կը մնայ հաստատուել թէ՛ անիկա
մանաւանդ Հռովմի եպիսկոպոսն էր քան թէ Ան-
տիոքայ կամ թէ Երուսաղեմի :

Ս'ենք բաւական ապացոյց ունինք Սուրբ Գիւր-

քէն թէ Պետրոս Արուսաղէմ՝ և Անտիոք ալ քարոզեց սահայն Հռովմ քարոզելուն, կամ թէ երբէք անոր հոն դացած ըլլալուն վրայ այնպիսի ապացոյց մը չունինք: Ինչո՞ւ համար ուրիմն Պետրոս Անտիոքայ կամ Արուսաղէմի առաջին եպիսկոպոս չի կոչուիր. և եթէ յաջորդներ պիտի ունենար, ինչո՞ւ համար այս յաջորդներն այն քաղաքներուն մէջ չեն փնտռուիր, քանի որ Աստուծոյ անսխալ խօսքէն գիտենք թէ անիկա այն քաղաքներուն մէջ կեցած ու աշխատած է. և ինչո՞ւ համար ապաւինիք անորոշ ու բերանացի աւանդուած խօսքի մը որ՝ ո՛չ Սուրբ Գրոց, ո՛չ ուրիշ վաւերական վկայութեամբ մը հաստատուած է, այլ պատմուած է հարիւրաւոր տարիներ ետքը գրուած պատմութեանց մէջ: Այժմէ յայտնի և բոլորովին խելք պառկելու կերպով կարելի ալ ըլլար հաստատել թէ Պետրոս Հռովմի եպիսկոպոս էր, որ անշուշտ չի կրնար հաստատուիլ, տակաւին կը մնար հաստատել թէ անիկա բոլոր ուրիշ եպիսկոպոսաց վրայ իշխանութիւն մը ունէր, և թէ իր այն իշխանութիւնը Հռովմի Պապերուն տուաւ:

Սա ալ ստոյգ է որ տիեզերական եպիսկոպոս անունը Հռովմի Պապը չէր պահանջած, մինչև որ եօթներորդ դարուն Ս. Գրիգորիոս Պ. Հռովմի Պապը՝ Փոկաս կայսրը յորդորեց որ այն անունը պապերուն տրուի:

Բրիտանոսի եկեղեցւոյն մէջ եպիսկոպոսաց իրարմէ աւելի մեծութիւն ունենալը՝ կամաց կամաց մը-

տաւ: Երկրորդ դարուն կատարեալ հաւասարութիւն կար անոնց մէջ ինչպէս որ վաւերական պատմութիւններ կը ցուցնեն: Երրորդ դարուն սկսաւ կարծուիլ թէ Հռովմի, Անտիոքայ և Աղեքսանդրիոյ եպիսկոպոսները բոլոր մնացածներուն վրայ տեսակ մը մեծութիւն ունին. ոմանք կը խորհէին նաև թէ՛ սս երեքին առաջինը Հռովմի Պապն էր, թէպէտ ուրիշներն այսպէս չէին խորհեր: Բայց և այնպէս ասոնց մէկն ալ տակաւին անատեն ուրիշներուն վրայ իշխանութիւն մը ունենալ չէր պահանջեր. և այն դարուն հայրերէն նաև անոնք որ Հռովմի եպիսկոպոսին առաջնութիւն մը ունենալն ընդունեցին, ինչպէս Արարիանոս և այլք ոմանք, բոլոր զօրութեամբ պնդեցին թէ՛ բոլոր եպիսկոպոսներուն պատիւն ու իշխանութիւնը հաւասար է. և ամենևին ետ չէին կենար Հռովմի եպիսկոպոսին հետ վեճելէ, երբ անոր գաղափարն իրենց զաղափարներէն տարբեր կ'ըլլար: Ասոր նշանաւոր օրինակ է հերետիկոսաց մկրտութեանը վրայ Արաքեղոսի Արարիանոս եպիսկոպոսին, ու Հռովմի Ատեփաննոս եպիսկոպոսին մէջտեղ եղած երեկելի վեճը: Այժմէ հիմա եպիսկոպոս մը այնպէս վեճելու ըլլայ Հռովմի Պապին դէմ, ապստամբ և հերետիկոս պիտի համարուի: Բայց երրորդ դարուն մէջ դեռ զիտցուած չէին Հռովմի Պապին այժմու փառասիրական պահանջումները:

Չորրորդ դարուն մէջ Առատանդնուպօլիս մեծին Առատանդիանոսի ձեռքն անցնելով, և կայսերա-

նիստ քաղաք ըլլալով, Աոստանդնուպօլսոյ եպիս-
կոպոսն առջև կոչուած միւս երեքին Հետ Հաւատա-
րեցաւ, և այնուհետև սա չորս, Հռովմի, Ընտի-
քայ, Աղքեսանդրիոյ ու Աոստանդնուպօլսի եպիս-
կոպոսները Պատրիարք կոչուեցան. բայց ամենևին
չէր պահանջուէր և չէր կարծուէր, որ ասոնց մէկը
միւսներուն վրայ իշխանութիւն մը ունէր: Եւս դա-
րուն մէջ՝ Ղիկիոյ ժողովն եղաւ, որ եկեղեցւոյ ա-
մենէն երևելի ժողովներուն մէկը կը համարուի:
Սեղբեստրոս Հռովմի եպիսկոպոսն այս ժողովին մէջ
չէր, և չերևիր թէ անոր Հետ դործ մ'ալ ունէր.
միայն երբ Աոստանդիանոս ժողովին կոնդակները
կնքած անոր ղրկեց, Սեղբեստրոս ժողով ըրաւ
Հռովմ երկու հարիւր վաթսուներեօթը եպիսկո-
պոսներով, որոնք ցուցուցին թէ այն կոնդակնե-
րուն հաճութիւն տալու պատրաստ են: Եսոր նման
ժողով մ'ալ եղաւ Արանատա Սպանիոյ մէջ. այս
ժողովին անդամներն ալ Ղիկիոյ ժողովին բոլոր
ըրաճներուն հաճութիւն տուին: Աոստանդիանոս
կայսրն էր Ղիկիոյ ժողովին իշխողը, և ժողովին
վճիռներն ան միայն կնքած և հաստատած էր. իր
արքայական նամակը բոլոր եկեղեցիներուն կը ղրկէր՝
պատուիրելով որ հնազանդութիւն ըլլայ ժողովին
կոնդակներուն:

Ես բաներէն յայտնի կը տեսնուի թէ այն ժա-
մանակը Հռովմի եպիսկոպոսը՝ կաթողիկէ եկեղեց-
ւոյ վրայ ընդհանուր ու գերագոյն իշխանութիւն մը
ունենալու դեռ ձեռնարկած չէր: Եթէ հիմա

Քրիստոնեայ թագաւոր մը ասոր պէս բան մը ընէր,
իսկոյն անոր վրայ վատ անուաններ պիտի դրուէին,
և անիկա մայր եկեղեցի ըսուած եկեղեցիէն ապրա-
տամբ, ու Հռովմի Պապին առանձնաշնորհու-
թիւնները յափշտակող մէկը պիտի համարուէր:
Քան մ'ալ կայ Ղիկիոյ ժողովին վերաբերեալ՝ որ
նկատելու արժանի է. այսինքն՝ ան ժողովին
վճռած վեցերորդ կանոնը, Հռովմի Աղքեսանդ-
րիոյ և Ընտիքայ եպիսկոպոսներն իրարու հետ
հաւասար կ'ընէ ամէն կերպով, և ամէն մէկուն
մի և նոյն գերազանցութիւնը կու տայ իրենց տակը
եղող եպիսկոպոսներուն վրայ իշխելու համար:
Եսկէ արթուն միտք ունեցող մը կրնայ տեսնել
թէ՛ այն ժամանակ ընդհանուր եպիսկոպոս չկար,
և հետևապէս Հռովմի եպիսկոպոսն ընդհանուր ե-
պիսկոպոս չէր, ինչպէս որ հիմա Պապը կը պնդէ
ըլլալ:

Ըն ատեն՝ Ղիկիոյ ժողովը ճշմարիտ կաթողիկէ
կամ ընդհանրական եկեղեցւոյ ժողով ճանչուեցաւ,
ու անոր կոնդակներն այնպէս գրուեցան, պապականք
ալ այնպէս ըլլալուն վրայ ամենևին վէճ չըրին.
այն ժամանակէն մինչև հիմա ալ այնպէս կ'ընդու-
նին և կը խոստովանին:

Յամի Տեառն 451 Քաղկեդոնի ժողովն իր 28
երորդ կանոնովը վճռեց թէ Աոստանդնուպօլսոյ
եպիսկոպոսն Հռովմի եպիսկոպոսին հետ մի և նոյն
պատիւն ու առանձնաշնորհութիւններն ունենայ,
և այն ժամանակէն՝ աս երկու եպիսկոպոսաց մէջ

տեղ սաստիկ հակառակութիւն մը սկսաւ առաջնութեան վրայ : Ա՛րքնապէս Կոստանդնուպօլսոյ եպիսկոպոսն՝ ընդհանուր եպիսկոպոսի անունն ընդունեց , ու վեցերորդ դարուն մէջ արեւելեան եպիսկոպոսներուն ժողով՝ թագաւորին հետ մէկտեղ աս անունն անոր շնորհեց : Ես բանիս վրայ մեծն Գրիգորիոս որ այն ատեն Հռովմի եպիսկոպոսն էր՝ շատ բարկացաւ , ինչու որ կը խորհէր թէ ինք աստիճանով Կոստանդնուպօլսոյ եպիսկոպոսին ըստ ամենայնի հաւասար էր . և այնպէս համարեցաւ որ այս ընդհանուր եպիսկոպոսի անունը , ընդդէմ Վրիստոնէութեան , և ամբարշտական աւնուն մըն է : Եյս պատճառաւ անիկա կայսեր և կայսրուհւոյն գրեց աս բանին անարժան ըլլալուն վրայ . Կոստանդնուպօլսոյ եպիսկոպոսին ալ գրեց որ՝ այն ընդհանուր եպիսկոպոսի հպարտ , ամբարտաւան , ամբարշտական և ընդդէմ Վրիստոնէութեան անունն ընդունելէն ետ կենայ . « Ի՞նչ որո՞ւ կը նմանիս » գրեց Գրիգորիոս այն եպիսկոպոսին , « այն ամբարտաւան անունն ընդունելով . որո՞ւ , եթէ ոչ անոր՝ (Սատանային) որ ամբարտաւանութեամբ հպարտացաւ . ինքզինք իրեն հաւասար հրեշտակաց անթիւ գունդերուն վրայ բարձրացնելու , որպէս զի ամենեկին մէկու մը չճառայէ , հապա բոլորք իրեն ծառայեն » : Յետոյ դարձեալ կ'ըսէ : « Եթէ Եռաբեկներէն մէկն ընդհանուր չկոչուեցաւ , վերջին օրն ի՞նչ պատասխան պիտի տաս Վրիստոսի՝ Եկեղեցւոյ ընդհանուր զիւոյն ,

դուն՝ որ ան անունն ամբարտաւանութեամբ անձիդ գրաւելով կը ջանաս անոր անդամները քեզի հնազանդեցնել :

Գրիգորիոսի բուն նամակներուն քաղուածներէն պիտի տեսնուի , որ անիկա հիմակուան Պապերուն պահանջածը , որ է եկեղեցւոյ զլուխ ըլլալ , իր վրայ առնելու տեղ , ինք զօրաւոր ածականներ գործածելով՝ Վրիստոսէ ՚ի զատ ընդհանուր եպիսկոպոս մը , կամ եկեղեցւոյ զլուխ մը ըլլալուն կարծիքը բոլորովին դատապարտեց :

Յետոյ Գրիգորիոս աս բանին վրայ յատուկ նամակներ գրեց քանի մը արեւելեան երեւելի եպիսկոպոսներու . Եղեքսանդրիոյ եպիսկոպոսն ալ՝ պատասխանին մէջ զԳրիգորիոս ընդհանուր եպիսկոպոս կոչեց , որ անունն անիկա մեծ սրտմտութեամբ արհամարհած էր : « Եթէ » , ըսաւ , « դուք ինձի վայլածէն աւելի անուն տալու ըլլաք , դուք ձեզ զրկած կ'ըլլաք ձեզի արժանի եղածէն : Ես կ'ուզեմ որ իմ վարքովս որոշուիմ , ո՛չ թէ անուններով : Իմ պատիւս չի կրնար աւելցնել այն բանը , որով իմ եղբայրներուս անպատուութիւնը կ'աւելնայ : Իմ պատիւս զանոնք իրենց պատուոյն մէջ պահելու վրայ կը կայանայ . եթէ զիս ընդհանուր Պապ կոչելու ըլլաք , իրաւցնէ անով՝ ձեր Պապ չըլլալը դուք ձենէ խոստովանած կ'ըլլաք : Ի՞նչոր համար այսպիսի անուններ չյիշուին , մեր մէջը անգամ չլսուին : Չեր սրբութիւնը ձեր նամակին մէջ կ'ըսէ , թէ ես ձեզի հրամայեր եմ .

քա՛ւ լեցի որ ես ձեզի հրամայեմ : Ես զիտեմ
 դուք ո՛վ էք, ու ես ո՛վ եմ : Կարգով իմ եղ-
 բայրս էք, ու վարքով իմ հայրս : Ե՛սոր համար
 ես ձեզի հրամայեցի, ու կ'աղաչեմ որ ասկէ ետե
 այդ խօսքը բերան չառնէք » : Այժմու Պապը
 բնաւ նամակի մը մէջ այս տեսակ գրութիւն մը չէ
 գործածած իր իրաւասութեանը ներքեւ դտնուող
 եպիսկոպոսներէն մէկուն . և կէս օրուան արևին
 պէս պայծառ է որ մեծն Գրիգորիոս չպահանջե-
 ամենևին այն զօրութիւնը, զոր ըստ պապականաց ,
 բոլոր Հռովմի պապերն ունին , և որպէս թէ
 Պետրոսի օրերէն հետէ՝ ունէին :

Վ՛ոնիփակիոս Գ. Պապը, Գրիգորիոսի մեռնե-
 ն երեք տարի ետքը, այս վերջինէն իբր մնտի,
 ամբարտաւան, անիրաւ, ընդդէմ Բրիտաննու-
 թեան և սատանայական համարուած ընդհանուր
 եպիսկոպոս տիտղոսը խնդրեց Փոկաս կայսրէն,
 ան ալ շնորհեց անոր, ինչպէս առաջ ըսինք . և
 այն օրէն մինչև հիմա՝ բոլոր Պապերը կը պահան-
 չին ու կը կրեն նոյն անունը :

Այսպէս մենք պատմութենէ կը տեսնենք որ ե-
 կեղեցւոյ առջի դարերուն մէջ՝ Հռովմի եպիսկո-
 պոսը մեծութիւն մը չունէր իր եղբայրներուն վրայ :
 Ասանկ բան մը ո՛չ ինքը պահանջեց, և ո՛չ ուրիշ-
 ները տուին անոր . նաև վեցերորդ դարուն մէջ
 մեծն Գրիգորիոս այս ընդհանուր եպիսկոպոսի ա-
 նունը մերժեց, թէպէտ յետոյ անմիջապէս անոր
 յաջորդին շնորհուեցաւ : Արևմն յայտնի թող

հասկըցուի՝ իբրև պատմութեամբ հաստատուած,
 թէ Վ՛ոնիփակիոս Գ. վեցերորդ դարուն մէջ,
 Հռովմի եպիսկոպոսներուն առաջինն էր, որ ընդ-
 հանուր եպիսկոպոսութիւնը պահանջեց : Եթէ այս-
 պէս է՝ սուրբ Պետրոսէն մնացած յաջորդութիւնը,
 և անո՛ւ վրայ դրուած բարձր պահանջումներն ո՛ւր
 կը մնան :

Աս ներկայ դարուս, և անցեալ շատ դարերու մէջ,
 պապականք դռողբար և յանիրաւի ըսած են,
 թէ Հռովմի եկեղեցիէն դուրս փրկութիւն չկայ :
 Հայերը, Յոյները և ուրիշներ՝ որոնք Պապին
 իշխանութեանը հնազանդութիւն չեն ցուցներ,
 առհասարակ կորսուած են : Սակայն նոզվելու այս-
 ընդհանուր զօրութիւնը՝ Պապն ուստի՞ առաւ :
 Առաքելոց ժամանակ Հռովմի մէջ աս տեսակ զօ-
 րութիւն մը կա՞ր, ու անատն փրկութեան համար
 աս տեսակ օրէնք մը հաստատուած էր :

Եւ բոր Պապական քարոզիչք՝ օտարներուն քա-
 րողութիւն ընելու կ'ելեն, իրենց խօսքին առաջին
 ու վերջին բնաբանը սա կ'ընեն . « Պետք է որ
 դուք Հռովմի եկեղեցւոյն ծոցը գանուիք . եթէ
 Հռովմի Պապին հնազանդութիւն չընէք, յաւի-
 տնական կորուստն անշուշտ ձեր բաժինը պիտի
 ըլլայ » : Սակայն Աւետարանին խօսքերն այսպէս
 էին, երբ Առաքեալք և առաջին քարոզիչք ա-
 ւետարանեցին : Եթէ Երուսաղէմի, Եստիօքաց
 և Պամասկոսի այժմու բնակիչներն՝ իրենց փրկու-
 թիւնը գանելու համար Հռովմի եկեղեցւոյն ան-

գամներն ըլլալու են, առաջ ալ աս բանը հարկաւոր պիտի ըլլար: Եւ զարմանալի բան մը չէ՞ որ Առաքեալք ու Աւետարանիչք որոնք Հրէաստանի մէջ քարոզելիս՝ ամենեւին բան մը չըսին՝ փրկութեան վերաբերեալ այն հարկաւոր պահանջման համար: Անոնք երբ փրկութեան կերպը կը քարոզէին մարդոց, ամենեւին բան մը չըսին Հռովմի Պապին, կամ եպիսկոպոսին հնազանդութիւն ընելու նկատմամբ: Այն նախնի դարուն մէջ երբ եկեղեցին մարուք էր, և Առաքեալք ու քարոզիչք փրկութեան ուղիղ ճամբուն մէջ կ'առաջնորդէին մարդոց, այն ատեն հաւատացեալներէն փրկուելու համար միայն առ Աստուած զղջում, և մեր Տէր Յիսուս Քրիստոսի վրայ հաւատք կը պահանջուէր: Մէկու մը չսորվեցուցին թէ՛ փրկութիւն գտնելու համար Հռովմի եպիսկոպոսին պէտք էր հնազանդիլ, թէպէտ և այն ժամանակը, պոպականներուն խօսքին նայելով, ինք Պետրոս էր Հռովմի եպիսկոպոսը: Առաքելոց աս բանին վրայ ունեցած լուծիւնը մեկնելու միայն ճամբայ մը կայ. և այն ճամբան սա պարզ ճշմարտութիւնն է թէ այն ատեն պապական իշխանութիւնը չկար: Առաքեալներն ու անոնց հետեւողները կը խորհէին թէ հաւատքով Տէր Յիսուս ընդունելը, և անիկա եկեղեցւոյ մեծ գլուխը համարելով անոր հնազանդութիւն ընելը միայն բաւական էր. անոնք բոլորովին վստահ էին թէ երկինք պիտի մտնեն Քրիստոսի իրենց տուած հրամանաւրին համեմատ, այսինքն՝ հաւատալու և ա-

պաշխարելու պայմանով, առանց Հռովմի եպիսկոպոսին, կամ աշխարհիս վրայ հոգեւոր կամ ժամանակաւոր ուրիշ որ եկցէ իշխանութեան մը երթալու՝ վերի աշխարհին համար հրամանագիր մը խնդրելու նպատակաւ: Մենք ալ այսպէս պիտի խորհինք և ասով գոհ պիտի ըլլանք ու բոլոր ուրիշներն ալ ջերմեռանդութեամբ պիտի յորդորենք այնպէս ընելու: Եթէ Առաքելոց տուած խրատներուն հետեւինք, չենք մոլորիւր. ուրեմն հաւատոյ և ապաշխարութեան այն պարզ պայմանովը գոհ ըլլանք, և ինք Քրիստոս վկայ է որ պիտի փրկուինք. «Աստուած է որ կ'արդարացնէ, ո՛վ է ան որ կը դատապարտէ »:

Աս ճառին առջի մասին մէջ յայտնի տեսնուեցաւ, որ Հռովմի Պապին եկեղեցւոյ գլուխ և ընդհանուր եպիսկոպոս ըլլալու պահանջումը բոլորովին անհիմն է: Ապա կը հետեւի որ այն խօսքն ալ անհիմն է թէ Հռովմի եկեղեցիէն դուրս փրկութիւն չկայ: Ուստի ամենեւին մէկը թող չվախնայ Հռովմի Պապին այն սուտ սպառնալիքներէն և անէծքներէն: Հայերը ճիշտ Հռովմայեցւոց պէս ընդհանրական եկեղեցւոյ մէկ մասն են: Քիտենք որ պապականք Հայերը հերձուածող կը կոչեն, սակայն յանիրաւի. մանաւանդ երբ պապադաւան Հայերը կ'ըսեն ասիկա: Պապադաւան Հայերն են հերձուածողները: Անոնք իրենց մայր եկեղեցիէն զատուցան ու Հռովմի եկեղեցւոյն յարեցան: Բուն Հայոց եկեղեցին ամենեւին Հռովմի իշխանութեանը

տակ մտած չէ : Հայոց եկեղեցին իր սկիզբէն
 Հռովմի եկեղեցւոյն պէս առաքելական եկեղեցի
 է . կաթողիկոսներէն ոմանք արդարեւ ժամանակ մը
 հնազանդութիւն ցուցուցին Հռովմի . բայց բուն
 անոնց ըրածը հերձուածողութիւն էր , և աս ալ քիչ
 ատենի մէջ շտկուեցաւ . ժողովուրդին մեծ մասը միշտ
 ազատ մնաց Հռովմի Պապէն : Հռովմի եպիսկո-
 պոսն իր բարձր իշխանութիւնը պահանջէին շատ
 ժամանակ առաջ՝ Հայոց եկեղեցին հաստատուած
 էր , և Սուրբ Գրոց կամ քանականութեան մէջ
 պատճառ մը չկայ , որ Հայ մը կամ որեւիցէ ազգի
 քրիստոնեայ մը համոզէ Պապին հնազանդելու :
 Պապը կրնայ մեզի սպառնալ , բայց չի կրնար վը-
 նասել : Կրնայ մեզի դէմ իր անէճքներուն սպառ-
 նալիքները հանել , սակայն անոնցմով մեր զլսու-
 մազին մէկն ալ չի մնասուիր : Մեզ յաւիտենական
 կորստեան կրնայ վճռել , սակայն ինքն ալ մեզի
 պէս ողորմելի և մահկանացու մէկն է , ու մեզի
 պէս Քրիստոսի ատեանին համար ունի տալու :
 Մեզի պէս քիչ ժամանակէն պիտի մեռնի . հան-
 դերձեալ աշխարհին մէջ ամենեկին իշխանութիւն
 չունի : Ուրեմն անոնցմէ չվախնանք որոնք մարմինը
 կը մեռցնեն , և անկէ ետեւ ուրիշ բան չեն կրնար
 ընել . հապա աւելի անկէ վախնանք՝ որ կարողու-
 թիւն ունի մարմինը և հոգին մէկտեղ դժոխքին
 մէջ մեռցնելու : Դատաստանին մէջ մեզի պիտի
 չհարցուի թէ արդեօք Հռովմի Պապին հնազան-
 դեցա՞նք , հապա պիտի հարցուի թէ՛ արդեօք

Քրիստոսի հնազանդութիւն ըրի՞նք : Ըն է մեր
 գլուխը , անոր պատասխան ունինք տալու , ու մեր
 փրկութիւնն անով է . գիտենք որ եթէ իրեն վրայ
 հաւատք ունենալով ապրելու ըլլանք , ամենեկին
 աշխարհի մէկ զօրութիւնը չի կրնար մեզ անկէ
 զատել :

Հռովմի եկեղեցւոյն Սուրբ Գիրքերը ժողո-
 վուրդէն արգիլելը՝ պապականութեան դէմ յայտ-
 նի վկայութիւն մըն է : Տէր Յիսուս Քրիստոսի
 բոլոր ըսածներն ու ըրածները , ցորեկուան պայծառ
 թուոյն մէջ էր : Ըն վկայեց՝ թէ Ես լոյս եմ աչ-
 խարհի . նաև ըսաւ թէ միայն չարութիւն գործող-
 ներն են որ խաւարը լուսէն աւելի կը սիրեն :

Պապականք միշտ շատ կը վախնան , Եստուծոյ
 գրուած խօսքերը հասարակ ժողովուրդոց ձեռքը
 տալու . աս պատճառաւ կասկած ունինք թէ անոնք
 գիտեն որ Պապին բարձր պահանջումներն Եստ-
 ուածաշունչէն չեն կրնար վաւերանալ , մանաւանդ
 թէ կը ջրուին , ուստի չխայտառահուելու համար՝
 կ'արգելուն Եստուածաշունչը ժողովուրդէն ըսելով ,
 « Մի՛ դպչեք , մի՛ ճաշակեք , ձեռք մի՛ առնէք » :
 Եւ պատճառ ունին աս զգուշութիւններն ընելու ,
 քանզի , ինչպէս 'ի սկզբան ցուցուցինք , Եստու-
 ծաշունչն ու Պապը բնաւ իրարու համաձայն չեն :

Բայց ստոյգ է արդեօք որ Հռովմի եկեղեցին
 Եստուծոյ խօսքը հասարակ ժողովուրդէն կ'ար-
 գիլէ : Պատմութիւնը կը վկայէ ասոր : Վեշտա-
 սաներորդ դարուն Տրիտենդ քաղաքը պապական

ժողով մը եղաւ : Հռովմի Պապն անձամբ հոն չէր, սակայն անոր փոխանորդներն հոն էին . անոնց միջոցաւ Պապն ուղածը վճռեց՝ հոն, ժողովին կոնդակները կնքեց, և դեռ ուրիշ ժողով մը անոր վճիռները փոխած չէ : Եւն կոնդակներէն հետեւալ կտորը կ'առնենք : « Որովհետեւ յայտնի է փորձով որ, եթէ Սուրբ Գիորգբեր թող տրուին ամէն տեղ կարդացուելու առանց խորութեան ուսմական լեզուով, աղէկութենէ աւելի մնաս կը ծաղի մարդոց յանդգնութենէն, իւրաքանչիւր եպիսկոպոսի կամ հոգևոր դատաւորի թող յանձնուի, որ իր թէմին մէջ դանուող քահանայից կամ խոստովանահարց խորհուրդով՝ պապական հեղեղնակներէ թարգմանուած Եստուածաշունչը ուսմական լեզուաւ կարդալու հրաման տայ անոնց միայն որոնց համար կրնայ կարծուիլ թէ Եստուածաշունչը կարդալով ոչ թէ կորուստ հապա աճում պիտի ստանան հաւատոյ և Եստուածպաշտութեան մէջ : Եստուածաշունչ կարդալու թոյլտուութիւն ունեցողք թող հրամանաչիւր ունենան . և ո՛վ որ անանց հրամանապրի համարձակելու ըլլայ Եստուածաշունչ կարդալ կամ ունենալ, իր մեղքերուն թողութիւն պիտի չգտնէ մինչև որ գիրքը եպիսկոպոսին չդարձնէ » : Ս'եր մէջ բերածը այն կոնդակին թարգմանութիւնն է . եթէ հարկ ըլլար, կրնայի անոր բուն լատիններէնը տալ, որ առջևս բաց դրած է : Եհա կը տեսնուի որ այս կանոնն ազգու կերպով մը ժողովուրդը կ'արգիլէ Եստուածոյ խօսքը կարդա-

լին : Ղշմարիտ է թէ աս կոնդակն ազատութիւն կու տայ Սուրբ Գիորգբը կարդալու անոնց՝ որ կրնան հրամանաչիւր մը ստանալ : Բայց այս ոչինչ բան մըն է, քանզի վերջապէս բոլորովին եկեղեցականաց կամքին յանձնուած է այս հրամանը տալ . և այնպիսի հրաման մը ձեռք բերելու ճամբուն մէջ այնպիսի դժուարութիւններ կան, որ ստանալը գրեթէ անհնար կ'ըլլայ : Երդարև քիչ մարդիկ կը համարձակին խնդրել, և աւելի քիչերը կրնան ստանալ այն հրամանը : Սակայն որեւիցէ ժողով մը կամ Պապ մը ինչ իրաւունք ունի որոշել թէ ինչ կերպով, կամ ո՞ր մարդ պարտի կարդալ Եստուածաշունչը : Եստուածաշունչն Եստուածոյ խօսքն է, որ մարդոց յանձնուած է : Ենոր մէջ Եստուած կը խօսի ամէն մարդու հարկաւոր բաներու վրայ, և Հռովմի Պապը թոյլտուութիւն կու տայ Եստուածոյ լսելու ոմանց միայն, որոնք եկեղեցականները յարմար կը դատեն : Լսել է թէ Պապը հրաման կ'ընէ Եստուածոյ որ իր արարածներէն ու մանց խօսի, և մնացածներուն համար վճռած է որ Եստուած ամենեկին չխօսի անոնց : Ո՛վ է ան որ ասանկ կը համարձակի երկնից Եստուածոյ հրամայել, ու անոր ցուցնել թէ որո՞ւ պարտի խօսիլ, և որու չխօսիլ : Ս'երոյիչեալ կոնդակը կ'ըսէ . Փորձով ստուգուած է թէ, եթէ թոյլ տրուի որ Սուրբ Գիորգ ամէն տեղ անխտիր կարդացուին, աղէկութենէ աւելի զէշուութիւն պիտի ծաղի անկէ : Լսել է թէ Պապն ու Տրիտենդեան ժողովը ստու-

զած են որ Աստուած յատկապէս մարդոց աղէկութեանը համար անոնց գիրք մը տուած է, սակայն փորձով տեսնուեր է որ Աստուծոյ տուած այն գիրքը եթէ առհասարակ կարդացուի, աղէկութենէն աւելի գէշութիւն կը հասնի: Կան մարդիկ որ զերենք Աստուծմէ աւելի իմաստուն կը ընեն, սակայն անոնց իմաստութիւնը ոչինչ պիտի ըլլայ:

Եթէ կ'ուզէ մէկը Տրիտենդեան հայրերուն աս այլանդակ խօսքին միտքը իմանալ, անոր կրնանք ըսել թէ ինչ է այն միտքը: Ենոնք փորձով տեսած են որ հասարակ ժողովուրդին առհաւարակ ուսմակահան ըզուով Սուրբ Գիրք կարգալը Պապական եկեղեցւոյն շատ մնաս կու տայ: Ասիկա միշտ ասանկ եղած է: Թող մարդ մը Աստուածաշունչը մտադրութեամբ կարդայ, շուտով աշուրները պիտի բացուին, և պիտի տեսնէ թէ ինչպէս անհիմն և սղտ են Հռովմէ եկեղեցւոյն պահանջումները. ու այն եկեղեցին ո՛րչափ հեռացած է ճշմարտութենէ: Իրաւ շատ մնասակար է Հռովմէ համար երբ ժողովուրդն անխտիր Սուրբ Գիրքերը կարդայ ու հասկնայ. այս պատճառաւ այն եկեղեցին յիշալ գրոց ընթերցումը կ'արգելէ:

Կ'ըսեն թէ՛ Սուրբ Գիրքերը զխաւորարար եկեղեցւոյ կարգաւորներուն և վարդապետներուն համար սահմանուած են, և անոնք միայն պիտի կարդան ու ժողովուրդին պատմեն: Սակայն շատ յայտնի է որ՝ Աստուած Սուրբ Գիրքերը ժողո-

վարդոց գործածութեանը համար սահմանած է: Ս'եր փրկիչը պարզ ըզուով կը խօսէր իր բոլոր աիքը եղող հասարակ մարդոց, միթէ այն խօսքերը զրուելով իրենց բնութիւնը փոխեցի՞ն, այնպէս որ չյարմարին նոյն տեսակ մարդոց որոնց առաջ խօսուեցան: Այն խօսքերն այն ժամանակը հասարակ ժողովրդոց բոլորովին անվտանգ էին և հիմա բոլորովին վտանգաւոր եղան:

Նոր Կտակարանին թուղթերը ոչ թէ եպիսկոպոսաց և եկեղեցականաց զրուած են, (բաց 'ի Տրիտութոսի ու Տրիտոսի թուղթերէն,) այլ ընդհանուր ժողովրդոց: Ենոնք անշուշտ հասարակութեան գործածութեանը համար և ուսմակահան ձեւով զրուած էին: Թող մէկը առաքելական նամակներուն ամէն մէկին զլուսները նայի, ու պիտի տեսնայ թէ վերը յիշուած երկուքէն 'ի զատ անոնց մէկն ալ եկեղեցականի զրուած չէ, հապաբոլոր սուրբերուն և Աստուծոյ ծառաներուն: Պետրոս իրեններն օտարականներու կը գրէ՝ որոնք Ասիայի հինգ գաւառներուն մէջ ցրուած էին: Յովհաննէս առաքեալ կ'ըսէ. « Կը գրեմ ձեզի, հայրեր, . . . կը գրեմ ձեզի, երիտասարդներ, . . . զրեցի ձեզի, տղա՛քներ » (Ա Յ. վ. Բ. 13, 14). ապա կը ցուցնէ թէ ինք ամէն աստիճանի մարդոց զրած է, և իր խօսքերը յայտնապէս ամէնուն հասողութեանը յարմար էին, երիտասարդաց և մանկանց անդամ: Ուստի չի կրնար ասկէ աւելի յայտնի ապացոյց ըլլալ, թէ այն նամակները ըս-

կիզբէն հաւարակութեան գործածութեանը համար գրուած էին : Եթէ այն ժամանակ անոնց հասարակ ժողովրդոց ձեռքը յանձնուիր անվտանգ էր , ինչո՞ւ համար հիմա ալ անվտանգ չէ : Եթէ ըսուի թէ այն ժամանակ կենդանի թարգմաններ կային որ Վրիստոսի խօսքերուն և առաքելոց թուղթերուն միտքը կը բացատրէին , կը պատասխանեմ թէ Առաքելոց գրով մեզի թողած այն խօսքերն ալ Վրիստոսի ու անոր Սուրբ Հոգւովը ներշնչեալ մարդոց ըրած բացատրութիւններն են փրկութեան ճամբուն վրայ , և ընդհանուր ժողովրդոց խօսուած ու անոնց ընդունակութեանը յարմարցուած են : Երբ Վրիստոս փրկութեան ճամբան կը ցուցնէր իր բոլորտիքը եղող բազմութեան , մութ և անհասկանալի բառերով չէր խօսէր , այնպէս որ հարկ ըլլար ուրիշի մը անոր ետեէն երթալ և ըսածները ժողովուրդին թարգմանել : Երբ Առաքեալք ալ իրենց թուղթերն ընդհանուր հաւատացելոց գրեցին , չըսին թէ անոնք բացատրուելու են . այլ պատուէր կու տային միայն որ անոնք եկեղեցիներուն մէջ կարդացուին (Ա թե . Ե . 27) , ցուցնելով որ իրենք վստահ էին թէ Վրիստոսի Աւետարանին համար իրենց ըրած բացատրութիւնը մաքուր և պարզ լեզուով էր , և կրնային հասկընալ անոնք որոնց գրուած էր :

Ըսել չենք ուզեր թէ հիմա Աստուծոյ խօսքը հասկընալու մէջ չկան դժուարութիւններ , որոնք Առաքելոց օրերը չկային : Լեզուի , և սովորու-

թեանց տարբերութեանը՝ պատճառաւ մեզի մութ կ'երևան Սուրբ Ղրոց զանազան տեղերը , որոնք անշուշտ յայտնի էին անոնց , որոնց գրուեցան : Սակայն փրկութեան վերաբերեալ ամէն բան յայտնի է : Եթէ մարդ մը կամ թէ մարդոց ժողովմը ըսելու ըլլայ թէ իրենք Աստուծոյ կողմանէ իշխանութիւն առած են Աստուածաշունչին թարգմանն ըլլալու մեզի , կ'աղաչենք այնպիսիներուն որ իրենց այսպիսի կարգ մը ունենալուն վկայականները մեզի ցուցունեն , որ անոնց տուած մեկնութեանը հաւատանք : Ապա թէ ոչ մենք մեզի կը քննենք Սուրբ Վերքերը , համարձակութիւն ունենալով ան խոստումէն՝ որ Յակ . Ա . 5 համարին մէջը գրուած է . « Թէ որ ձեզմէ մէկը իմաստութենէ պակաս ըլլայ , թո՛ղ խնդրէ Աստուծմէ՝ որ ամէնուն առատապէս կու տայ՝ ու չնախատեր , և անոր պիտի տրուի » : Աւելի կ'ընտրենք լուսոյ ու օգնականութեան համար Աստուծոյ նայել անոր խօսքերն աղէկ հասկընալու համար , քան թէ ուրիշ մէկու մը՝ իբրեւ անխալ թարգմանի :

Ինչաւ եկեղեցի մը վախնալու չէ Աստուծոյ խօսքն ընդհանուր հաւարակութեան մէջ հրատարակելէ , հապա ա՛ն միայն թող վախնայ որ ժողովուրդը խաբելով ինքզինք կը մեծցնէ : Աստուածաշունչը բոլոր իր զօրութիւններովը մաքուր և սուրբ է . սակայն խաբէութիւնը կը յանդիմանէ , կեղծաւորութիւնը կը յայտնէ , ու մթութեան ամպերը կը փարատէ :

Մտուածոյ անհուն իմաստութեան մէկ գործն էր որ այն գրուած խօսքը մեզի տրուեցաւ : Մտուած՝ մարդկային սրտին խաբէութիւնն ու խորին չարութիւնը , դարձեալ՝ ճշմարիտ պատմութեանց բերնէ բերան անցնելով ո՛րչափ դիւրաւ փոխուիլը , և մարդոց մէջ յաջորդութեամբ եկող աւանդութեանց անստուգութիւնն աղէկ զիտնալով , չէր կրնար բուն իր յաւիտենական ճշմարտութիւնն այնպիսի փոփոխութեան վտանգի մէջ ձգել : Եւ մարդու աչքին առջև եղող , միշտ ապրող , և ամէն մարդու մօտ գտնուող , հաստատուն և անփոփոխելի կանոնի մը հարկաւորութիւնը աղէկ զիտնալով , Սուրբ Գիրքերը մեզի տուաւ՝ իրրև այնպիսի կանոն մը : Կա՛ն յատուկ իմաստութեամբ մը Մտուած իր Սուրբ Գիրքը հասարակաց գործածութեանը յարմարեց , ոչ թէ մութ ու գաղտնի զրուցուածներով կղպած պահեց՝ որ միայն զիտնականները կարող ըլլան հասկընալ . Սուրբ Գիրքը ռամկական ձևով գրուած ըլլալով միշտ արդեւք մըն է խաբեբայ ու փառասէր մարդոց : Էիմա եթէ մարդ մը մեզի ճշմարտութիւն մը ճանչընել ուղէ , մեզի ուրիշ բան ընել պէտք է՛ , բայց անոր ըսածները Սուրբ Գրքին հետ բաղդատել : Մեր միմիայն ապահով կանոնը Սուրբ Գիրքն է , և անիկա Մտուած ամէն մարդու գործածութեանը համար տուած է , որպէս զի անով բոլոր վարդապետութիւնները գտնենք՝ թէ արդեօք Մտուածմէնն : Ենոր համար մենք ազատ ենք ամէն մարդու

բարոզութիւնն Մտուածոյ Սուրբ Գրքին հետ բաղդատելու : Էոզով Սրբով ներշնչեալ մատենադիր մը Բերիացիք կը գովէր , (Գրք . Ժէ . 11) , որ անոնք իրենց ամէն լածը մէկէն չէին ընդուներ , նոյն իսկ Պօղոսի և Շիղայի ըսածները . հապաւմէն որ Սուրբ Գիրքերը կը քննէին զիտնալութէ անոնց ըսածն այնպէս է :

Իսրայէլացոց հրամայուեցաւ որ Մտուածմէ արդէն իրենց յայտնուած ճշմարտութիւններուն դէմ խօսող մարդու մը մտիկ չընեն , թէ և ըսածները հաստատելու համար հրաշք ալ ընելու ըլլայ . (ԲՕրէն . ԺԳ . 1, 2, 3) : Եւ յայտնալ և մեր պարտաւորութիւնն է որ ամէն ճշմարտութիւն Մտուածոյ յայտնութեանը քով բերենք և անոր հետ բաղդատենք : Ելեարհի վոյ իշխան մը չկայ որ իշխանութիւն ունենայ յափշտակել սա իրաւունքը և ազատութիւնը զոր ունին մարդիկ իրենց լսած վարդապետութիւնները Սուրբ Գրքին հետ բաղդատելու : Երդարև եթէ երկինքէն հրեշտակ մը մեր առջին երևնալու ըլլայ և ըսէ թէ Մտուածմէ խօսք բերած է մեզի , այն առեմն անգամ մեզի հարկ է որ անոր խօսքը Սուրբ Գրոց հետ բաղդատենք , ու եթէ անոր դէմ բան մը կայ , անիկա մերժենք : Ինչու որ Պօղոս ըսաւ , « թիէ որ մենք կամ երկինքէն հրեշտակ մը դայ աւետարանէ ձեզի անկէ ուրիշ՝ որ մենք աւետարանեցինք ձեզի , նզովեալ ըլլայ » : (Գաղ . Ա . 8 .)

Պօղոս Տիմոթէոսը կը գովէր Սուրբ Գիրքերը

իր մանկութենէն հետէ սորվելուն համար, «Որոնք» կ'ըսէ Մաթեայը, «կրնան իմաստուն ընել քեզ փրկուելու» Վրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատքովը: Ու նաև կ'ըսէ. «Բոլոր Վիբրը Մտուծոյ շունչն է. և օգտակար է սորվեցընելու, յանդիմանելու, շիտկելու, ու արդարութեան խրատելու համար. որ Մտուծոյ մարդը կատարեալ ըլլայ՝ ամէն բարի գործքերու պատրաստուած» (ԲՏԻՏ. Գ. 15-17):

Եթէ Տիմոթէոս իր տղայութեան ժամանակը Սուրբ Վիբրերը կրցաւ սորվիլ՝ ուրեմն ուրիշներն ալ նոյն տարիքին մէջ կրնան սորվիլ. և եթէ Մտուածաշունչին ճշմարտութիւնները բաւական պարզ են տղոց համար հասկընալու՝ ուրեմն անոնք ընդհանրաբար բոլոր ժողովրդոց գործածութեանը համար ալ պարզ և յստակ են:

Պօղոս Եփեսացոց Գ. 17 համարին մէջ կ'ըսէ թէ՛ «Ընէք, Հոգիին սուրբ՝ որ Մտուծոյ խօսքն է»: Եսիկա բոլոր հաւատացեալներուն ըսուեցաւ. սակայն այս յորդորանքին ինչպէս կրնայ հնազանդուել, եթէ ամէնուն ալ հրաման չկայ Մտուծոյ խօսքը ընդունելու: «Ըմէն բան փորձեցէք», կ'ըսէ Պօղոս Թեսաղոնիկեցոց, «բարին ամուր բռնեցէք»: «Սիրելիներ՝ ամէն հոգիի (վարդապետի) մի՛ հաւատաք. հապա հոգիները փորձեցէք թէ արդեօք Մտուծոյն են. ինչու որ աշխարհիս վրայ շատ սուտ մարդարէններ ելած են» (ԵՅԻՏ. Դ. 1): Սակայն ասիկա ինչպէս

կրնանք ընել, եթէ Հռովմի քարոզիչներուն ըսածներուն առանց փորձելու հաւատանք:

Հրէից պարտականութիւնն էր՝ օրէնքն իրենց տանը մէջ ունենալ, ու սրտի մտօք անիկայ իրենց զակըններուն սորվեցընել (ԲՅԵՖ. Զ. 7, 9). ո՛րչափ ևս աւելի հարկաւոր է որ Վրիստոնեայք Մետարանին փառաւոր ճշմարտութիւնը կարգան և իրենց զակըններուն սորվեցընեն:

Եսկէ մեծ հատոր մը կրնայ գրուիլ ուրիշ շատ պատճառներ ցուցընելով՝ որ Հռովմի եկեղեցւոյն պահանջները ընդունելի չեն: Սակայն թող մեր ըսածները խոհեմ մարդիկ կարգան և աղէկ կըռեն, և ըստ այնմ վարուին այն պահանջումներուն նկատմամբ:

Եսիկա գրողն ամենեւին չուզեր որ մարդու մը վնաս ընէ: Հռովմի եկեղեցւոյն համար անգամ կը բաղձայ որ իր սխալմունքէն դառնայ, և Մետարանին շնորհքովը զարգարուի: Հարկ էր աս բաներուն վրայ խօսիլ, ինչու որ շատերը տգիտութեամբ այնպիսի պահանջումներէ խաբուած, և բոլորովին անհիմն սպառնալիքներէ վախցած են: Ուրեմն թող ամէն մարդ առանց վախուքնէ, և թող Մտուծոյ Հոգին ամէն մարդ առաջնորդէ Յիսուսի ճշմարտութիւնը զիտնալու:

Ս. Ե. Բ.



973

0027692

973

« Ազգային գրադարան



NL0027692



